

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ
Ո Ր Ո Շ ՈՒ Մ
№ 13/08

Քաղ. Երևան

26 մայիսի 2008թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ. Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս. Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ. դամյան, Ա.Ա. Տոնիկյան և Ա.Վ. Բաբայան, քարտուղար՝ Լ.Ե.Ասցատրյան, իր 2008թ. մայիսի 26-ի նիստում (արձանագրություն № 61/6) քննարկեց ՀՀ հավատարամատար Զ.Մանուկյանի 2008թ. հունվարի 28-ի դիմումը Օբշեստվո և Օգրանիչենոյ Օտվետաստվեննոստյու «Դիոնիս Կլուբ» (RU) ընկերության «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունը չօգտագործման պատճառով ԱՕՄԴ-ի 33-րդ դասի բոլոր գրանցված ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնելու խնդրանքով:

Դիմողի փաստարկները հետևյալն են:

Դիմողը դիմումում նշել է, որ իր ընկերության կողմից Հայաստանի Հանրապետությունում կատարված մարքետինգային ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002) ապրանքային նշանը 33-րդ դասի ապրանքների համար սեփականատիրոջ կողմից չի օգտագործվում: Հայկական շուկայում չկա «ARTSIV» ապրանքային նշանով մակնշված 33-րդ դասին պատկանող ոչ մի ապրանք: Դիմողի ընկերությունը նաև հարցում է կատարել ոգելից խմիչքների մասնագիտացված խանութներում և առավել հայտնի հանրախանութներում, որտեղից հայտնեցին, որ իրենց ունեցած տեղեկություններով վաճառքի մեջ չկա և երբևէ չի եղել «ARTSIV» ապրանքային նշանով մակնշված ոգելից խմիչք:

Հետևաբար «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև օրենք) 22-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն, «ապրանքային նշանի գրանցման գործողությունը կարող է ցանկացած անձի դիմումի հիման վրա, բողոքարկման խորհրդի որոշմամբ, դադարեցվել վաղաժամկետ՝ բոլոր գրանցված

ապրանքների կամ դրանց մի մասի նկատմամբ, եթե ապրանքին նշանի գրանցման թվականից հաշված 5 տարվա ընթացքում, կամ դիմումն ավելի ուշ ներկայացնելու դեպքում՝ դրան անմիջականորեն նախորդող 5 տարվա ընթացքում այն չի օգտագործվել ապրանքային նշանի սեփականատիրոջ կամ վերը նշված օրենքի 26-րդ հոդվածի համաձայն՝ լիցենզային պայմանագրով այդ իրավունքն ունեցող անձի կողմից:» Ելնելով դրանից և հիմք ընդունելով օրենքի նշված դրույթները, դիմողը խնդրել է «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002) բառային ապրանքային նշանի գրանցման գործողությունը Հայաստանի Հանրապետության տարածքում ԱՕՄԴ 33-րդ դասի բոլոր գրանցված ապրանքների համար վաղաժամկետ դադարեցնել:

Բողոքարկման խորհուրդը «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 34-րդ կետի համաձայն 04.04.08թ. հետձանուցմամբ փոստային առաքմամբ ծանուցել է «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002) ապրանքային նշանի սեփականատեր Օբշեստվո ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Դիոնիս Կլուբ» (RU) ընկերությանը (121087, Москва, Багратионовский проезд, д.7, корп.2 РОССИЯ) բողոքարկման խորհրդի կողմից 2008թ. ապրիլի 1-ի ՀՀ հավատարամատար Զ.Մանուկյանի ներկայացված դիմումը քննարկման ընդունելու, նիստի անցկացման թվականի (2008թ. մայիսի 27), ՀՀ արտոնագրային հավատարամատարի միջոցով դիմումի վերաբերյալ իր առարկությունները նիստի անցկացման օրվանից ոչ ուշ քան 10 օր առաջ ներկայացնելու և իր շահերը պաշտպանելու մասին:

Ըստ գործակալության ստացված հետձանուցման, հասցեատիրոջ կողմից ծանուցումը ստացվել է 11.04.08թ., սակայն 2008թ. մայիսի 26-ի բողոքարկման խորհրդի նիստին սեփականատիրոջ որևէ ներկայացուցիչ չի ներկայացել, ինչպես նաև սեփականատիրոջից որևէ գրավոր արձագանք բողոքարկման խորհուրդը չի ստացել:

Դիմումում բերված հիմնավորումների շրջանակներում քննարկելով ներկայացված նյութերը, ինչպես նաև հաշվի առնելով նիստում դիմումի ըստ էության քննարկման արդյունքները և այն փաստը, որ օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասի 1-ին պարբերության համաձայն ապրանքային նշանի օգտագործման ապացույցները պետք է ներկայացնի դրա սեփականատերը, տվյալ դեպքում՝ Օբշեստվո ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Դիոնիս Կլուբ» (RU) ընկերությունը, որը պատշաճ ծանուցված է եղել, սակայն 2008թ մայիսի 26-ի բողոքարկման խորհրդի նիստին չի ներկայացել և օգտագործման որևէ ապացույց չի ներկայացրել, ինչից կարելի է եզրակացնել, որ ընկերությունը «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002)

ապրանքային նշանը չի օգտագործել Հայաստանում, բողոքարկման խորհուրդը համարում է, որ նշված ապրանքային նշանը չօգտագործելու վերաբերյալ ՀՀ հավատարամատար Ջ.Մանուկյանի դիմումում բերված փաստարկները հերքելու հիմքեր չկան, և դիմումը ենթակա է բավարարման:

Ելնելով դրանից և ղեկավարվելով օրենքի 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 79-րդ կետի «ա» ենթակետով, բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Բավարարել ՀՀ հավատարամատար Ջ.Մանուկյանի 2008թ. հունվարի 28-ի դիմումը ամբողջովին և Օբշեստվո ս Օգրանիչեննոյ Օտվետստվեննոստյու «Դինիս Կլուբ» (RU) ընկերության «ARTSIV» (ՀՀ վկ.դ7002) ապրանքային նշանի գրանցման գործողությունը վաղաժամկետ դադարեցնել Հայաստանի Հանրապետության տարածքում՝ ԱՕՄԴ-ի 33-րդ դասի բոլոր գրանցված ապրանքների նկատմամբ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ

Ա.Ազիզյան